Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՍԱՆԱՍԵՅԻՆԱՎ

ՓՈԽԱԴՐԵՑ ՍԻՄԱԿ

ՎԱՐՍԻԿԻ ՏԻԿՆԻԿԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 585

Գրառեալ. № 264 բ. *Տիրաժ 3000.* *Վիմագր. Հայպետվիգ. պատ. № 4004.*

ՎԱՐՍԻԿԻ ՏԻԿՆԻԿԸ

Վարսիկը մի գեղեցիկ տիկին ուներ, անունը՝ սիրուն Սեդա։ Նա շատ էր սիրում իր սիրուն Սեդային. նրա համար մահճակալ էլ ուներ, վերմակ էլ, բարձ էլ։

Մի անգամ Վարսիկը լոգացրեց տիկնիկին - բայց — ա՛յ քեզ դժբախտություն, սիրուն Սեդան հիվանդացավ, թևերը թուլացան, կախ ընկան. վոտքերը ծռվեցին — մի կողմ շուռ եկան։ Կարծես՝ ինքը ուրիշ կողմ էր նայում — ուրիշ կողմ էր ուզում գնալ — վոտքերը ուրիշ կողմն էին ծռվել։

Հանրապետական գրադարան
ԱԿԱԴԵՄԻԱ

Շատ մտածեց եղ մասին Վարսիկը, հետո հանգստացավ։ Մի քանի որ հետո անձրև եր գալիս, ամեն կողմ ջուր եր վազում։ Վարսիկը մտածեց. յեթե նորից մի լավ լողացնի սիրուն Սեդային, Սեդան անպայման կլավանա։ Տարավ կոխեց անձրևաջրով լիքը մեծ տակառը։ Ահե—ես ինչ բան ե—գլուխը կտրվեց, մի ձեռքին մնաց, մարմինը՝ մյուս ձեռքին։

— Ինչ անեմ, ինչ չանեմ,—մտածեց Վարսիկը.—ես հա՛ կմեռնի առանց գլուխ, իմ սիրուն Սեդան։ Վազեց մեծերի մոտ.—ոգուտ չկար։ Մայրը լվացք ուներ, կերակուր պետք ե յեփեր, նրանով զբաղվել չեր կարող. դիմեց Սիմոնին—յեղբորը.—դե կորի՛, դու ել, քո տիկնիկն ել.—յես դասերս պետք ե սովորեմ,—ասաց նա։ Ձարը կտրած՝ դիմեց մեծ քրոջը՝ Մանուշին։ Մանուշն ել ասաց.—ի՜հ, լացլակ... ինչ մեծ բան ե, վոր քո տիկնիկի գլուխը պակ ե յեկել.—տիկնիկ ե, հա՛ մարդ չի։

Վարսիկը գիտեր, վոր սիրուն Սեդան մարդ չի, բայց չե՞ վոր ինքը շատ ե սիրում Սեդա-

յին։ Նա նեղացավ, գնաց՝ պատուհանի մոտ նստեց, գլուխը թեքեց ձեռքերին և նայում էր դուրս։

Հանկարծ նա տեսավ, որ փողոցով անցավ իրենց ծանոթ բժիշկը։ Վարսիկը նրան լավ էր ճանաչում, ամեռը Մանուշը որ հիվանդացավ, նա յեկավ, բժշկեց։ Նրանք հեռու չեն ապրում—յերկու տուն վերև է։ «Այ՛, յեթե սիրուն Սեդային բժիշկը տեսնի, նա անպատճառ կբժիշկի» մտածեց Վարսիկը։ Եվ յերկար չմտածեց. սիրուն Սեդային փաթաթեց իր վերմակի մեջ ու պռկեց։

Հասավ բժշկենց տուն։ Դռնից ներս մտավ.—աջ կողմն էլ դուռ կա, ձախ կողմն էլ.—իսկ վերևից սանդուխքներով մի մեծ մարդ է իջնում։

— Ինչ ես ուզում, աչիկո՛, հարցրեց նա։

— Յես բժշկի՛ մոտ եմ յեկել—կամաց պատասխանեց Վարսիկը։

— Բժիշկն եստեղ է ապրում։ Հաստ մարդը մոտեցավ աջ դռանը, իր փայտով կամաց խփեց ու ասաց.—հիմա բաց կանեն.—ասաց ու ինքը դուրս գնաց։

Վարսիկը մենակ վախեցավ. ուզեց փախչել, մին էլ դուռը բաց արավ—ոմ.—ինքը բժիշկը։

— Ինձ մո՞տ ես յեկել, աչիկ ջան...

Հա՜, ես մեր փոքրիկ հարևանուհին է. յերևի մայրիկդ է ուղարկել։

Բժշկի բարի դեմքից, քնքույշ խոսակցությունից Վարսիկը սիրտ առավ ասաց։

— Չէ՛, բժի՛շկ,...յես...յես յեկել եմ։ Իմ տիկնիկը՝ Սեդան, հիվանդացել է։ Ու Սեդային մեկնեց բժշկին։ Բժիշկը կապոցը վերցրեց, բաց արավ...

— Հմ, ասաց նա—քո Սեղան շատ ծանր հիվանդ է։ Նրան հո չե՞ս լսացրել։

Վարսիկը զարմացավ, թե բժիշկը ինչպես իսկույն հասկացավ։

— Այո՛, յես նրան...տակառում... լսացրի։

— Այ, տեսնում ես. դրանից է հիվանդացել։ Բայց բան չկա, յես նրան հիվանդանոցում կպառկեցնեմ, կլավանա։ Եգուց ես ժամանակ արի՝ տար։ Հիմի գնա։

Մյուս որը Վարսիկը նորից գնաց բժշկի մոտ։ Դուռը բաց արավ բժիշկի աղջիկը և բարձր ձայնով ասաց,

— Հայրիկ, հարևանենց աղջիկն է։ Բժիշկը դուրս յեկավ—սիրուն Սեդային ձեռքին բռնած։ Բայց ինչ լավացել եր Սեդան։ Գլուխն իրեն տեղն եր, թևերն ու վոտքերն ուղիղ ու կանոնավոր։

— Քո Սեդան լավացավ, ասաց բժիշկը. միայն թե վզին կոտրածի տեղը կմնա, վոչինչ, շորերի տակը կլինի։

Վարսիկը ուրախությունից թռչկոտում եր։

— Շնորհակալ եմ, բժիշկ, — ասաց, ու տուն վազեց։

Պատշգամբում Մանուշը պատահեց նրան.

— Վարսիկ, տիկնիկդ ինչ արիր, տուր՝ խմորով կպըցնեմ, — ասաց նա։

Վարսիկը թևի տակից հանեց իր սիրուն Սեդային ու ցույց տվեց։

Այ, տես, բժիշկը Սեդային տարավ հիվանդանոց, բժշկեց։ Տես՝ ինչ լավն է, բոլորովին առողջացել է։

Հ 39279

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039272

[054.]

A II 39272

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏԻ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐԱԴԱՐԱՆ

Շունն ու կատուն, Հով. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ . . . . 50 կ.
Մեծն Հակոբեմբեր, ԽՆԿՈ ԱՊԵՐ . . . . 30 կ.
Առաջին վարար, փոխադր. ԽՆԿՈ ԱՊԵՐ . . . . 50 կ.
Մի գավաթ թեյ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ . . . . 60 կ.
Ջեյրանի հիմանդությունը, ՍԻՄԱԿԻ . . . . 20 կ.
Վարսիկի տիկնիկը փոխ. » . . . . 20 կ.
Գարոին ազատեց » » . . . . 20 կ.
Յալակի շապիկը » » . . . . 20 կ.
Ինչ լավ ոգնեցին » » . . . . 20 կ.
Նանի թանը » » . . . . 20 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Մանկակոչ կամ Մանկ. Ինտերնացիոնալ, փոխ ԽՆԿՈ ԱՊԵՐ
Նուր՝ թուրքերեն, փոխ. ՍԱԼԱՓՅԱՆ
Հակա բզեզը ու քաջ. ձիտիկը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ
Եղջերուն, Հով. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Նոր շոգեշարժը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ
Հովիվ Մկան ու կկուն, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ